ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

<<07>> 12 2012թ. N325-Ն ք.Գյումրի

<<ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՍԱՄԱՐԻԹԵՐ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ԵՎ ՍՐՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՑՆԵԼՈՒ, <<ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<իա>> ենթակետի, 84-րդ հոդվածի 1-ին կետի <<իզ>>, <<իդ>> ենթակետերի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման N 9 հավելվածի «Գյումրի քաղաք» բաժնի 4-րդ կետի.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը միացնել «Գյումրու Սամարիթեր հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության թերապևտիկ և սրտաբանական ծառայությունները:

2. «Գյումրու Սամարիթեր հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության գույքի կազմից առանձնացնել թերապևտիկ և սրտաբանական ծառայություններին ամրացված գույքը և հանձնել «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն N 1 հավելվածի:

1) «Գյումրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական [illegible] (այսուհետ՝ Ընկերություն) 2012 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 2 հավելվածի.

2) Ընկերություն 2012 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Ընկերության գործադիր տնօրենի վարձատրության չափը սահմանել մեկ հաստիքային միավորի համար ամսական 400000 դրամ՝ այն տարածելով 2012 թվականի հուլիսի 13-ից ծագած հարաբերությունների վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ Հ.Հովհաննիսյանի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ — Ա. ԳԻԺԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝